# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՓԱՄԲԱԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

«06» Փետրվար 2015 թ. No 15

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Փամբակ համայնք,
Հացե՝ 1փողոց 17

pambak.lori@mta.gov.am

098-86-93-03

Լոռու մարզի մարզպետ
Պարոն՝ Ա. Նալբանդյանին

Ձեզ ենք ներկայացնում Փամբակ համայնքի ավագանու թիվ 01, 02 որոշումները:

*Համայնքի ղեկավար՝* *Ս. Լ. Ոլիխանյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՓԱՄԲԱԿԻ ԱՎԱԳԱՆԻ

«05» Փետրվար 2015 թ.

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Փամբակ համայնք,
Հասցե՝ 1փողոց 17

pambak.lori@mta.gov.am

098-86-93-03

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   0 1

## ՓԱՄԲԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու, կարգը հաստատելու , և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հավանություն տալ ՀՀ Լոռու մարզի Փամբակ գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսանող 0778-0001 ծածկագրից 0,006919 հա բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողամասի նպատակային նշանակությունը, հեռուստատեսության արդիականացման ծրագրի շրջանակներում, թվային հեռուստաաշտարակ կառուցելու նպատակով, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների , օբյեկտների, հողերի նպատակային նշանակության, կապի հողերի գործառնական նշանակության փոխադրելու առաջարկությանը:

2. Համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխման վերաբերյալ կազմված հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

| Համայնքի ավագանու անդամներ | ԿՈՂՄ(4) | ԴԵՄ(0) | ՁԵՌՆՊԱՀ(0) |
|---|---|---|---|
| Նարեկ Անտոնյան | [signature] | - | - |
| Անդրանիկ Հովսեփյան | [signature] | - | - |
| Արկադիկ Թունյան | [signature] | - | - |
| Գարեգին Սարոյան | [signature] | - | - |
| | | - | - |

*Համայնքի ղեկավար՝* [signature] *Ս. Լ. Ուլիխանյան*

ՓԱՄԲԱԿ * 07300746

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«05» փետրվար 2015թ. N 02

# ՈՐՈՇՈՒՄ

*ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Փամբակ համայնքի գազաֆիկացման նպատակով կառուցվել են գազատարներ (գազահամակարգ):

Քանի որ համայնքը չունի համապատասխան մասնագիտական և նյութատեխնիկական բազա շահագործելու համար նշված գազահամակարգը, ուստի համայնքի ավագանին

**որոշում է՝**

Ստորև նշված գազատար խողովակները 15 (տասնհինգ) տարի ժամկետով անհատույց հանձնել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ՓԲԸ Լոռու գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղին, կնքելով համապատասխան պայմանագիր:

Գույքի անվանումը՝ Փամբակ համայնքի գազահամակարգ

Գույքի վերականգնման տարեթիվը՝ 2009թ.

1. Գույքի բնութագիրը՝

| Խողովակների տրամագիծը | Երկարությունը (գծամետր) | այդ թվում | | Գազատարի տեսակը | | Գազատարի վրա տեղադրված փակող սարքեր | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ստորգ. (գ.ծ.մ) | վերգ. (գ.ծ.մ) | միջին ճնշման (գ.ծ.մ) | ցածր ճնշման (գ.ծ.մ) | տեսակը (մակնիշը) | քանակը (հատ) |
| 133 | 5 | | 5 | | 5 | | |
| 57 | 310 | | 310 | | 310 | | |
| *Ընդամենը* | *315* | | *315* | | *315* | | |

2. Գույքի հաշվեկշռային արժեքը՝ 1700000 դրամ:

3. Համայնքի ղեկավար Ս. Ուլիխանյանին «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Լոռու գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի հետ կնքել վերը նշված գույքի անհատույց օգտագործման (շահագործման) պայմանագիր:

Ավագանու անդամներ՝

Գարեգին Սարոյան

Նարեկ Անտոնյան

Սարո Սարոյան

Անդրանիկ Հովսեփյան

Արկադիկ Թունյան

Համայնքի ղեկավար՝ Սամսոն Ուլիխանյան